# ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 2022-2023 ուս տարի

## Հասարակագիտություն

IX դասարան

Բաղդասարյան Աննա

«Հասարակագիտություն» 9-րդ դասարան

Թեմատիկ պլանավորում

Շաբաթական 1 ժամ

Տարեկան 34 ժամ

| Թեմա 1 . | Թեմայի նպատակը | Վերջնարդյունքներ |
|---|---|---|
| Ժողովրդավարական հասարակություն | Ներկայացնել ժողովրդավարության հիմնարար արժեքները: Բացատրել Ժողովրդավարություն և Սահմանադրություն հասկացությունները: Ներկայացնել ժողովրդավարության հիմնարար արժեքները և սկզբունքները: Բնութագրել իրավական պետությունը: Պարզաբանել օրենքների և այլ իրավական ակտերի դերը մարդու հիմնարար իրավունքների պահպանման գործում: Բացատրել խտրականություն և սեռային իրավահավասարություն հասկացությունները: Բացատրել ազատ և արդար ընտրությունների կարևորությունը իր և հասարակության համար: Ներկայացնել քաղաքական կուսակցությունների դերը որպես ժողովրդավարական հասարակության մեջ հասարակության տարբեր խմբերի շահերը ներկայացնող միջոց, ընտրական տեղամասեր և տեղամասային | Սահմանել Ժողովրդավարություն և Սահմանադրություն հասկացությունները: Վերլուծել ժողովրդավարության առավելություններն ու դժվարությունները: Թվարկել իրավական պետությանը բնորոշ հատկանիշներ: Քննարկել ՀՀ-ն որպես իրավական պետություն: Տարբերակել խտրականության տեսակները: Ներկայացնել ազատ ընտրությունը քվեարկության միջոցով որոշումներ կայացնելու ձև: Վերլուծել ընտրություններին գիտակցված մասնակցության ազդեցությունը ժողովրդավարական հասարակության կայացման գործում: Տարբերակել քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Հիմնավորել ժողովրդավարական իշխանությունը որպես հանրային բարիքի ստեղծման երաշխավոր: Վերլուծել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների |

| | | |
|---|---|---|
| | կենտրոններ ձևավորելու կարգը: Բացատրել ինչ է հանրային բարիքը: Ներկայացնել ՄԱԿ-ը որպես միջազգային կառույց: Մեկնաբանել կանոնադրությամբ հաստատված ՄԱԿ-ի նպատակները: | պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի կամ միջազգային որևէ այլ փաստաթղթի բովանդակությունը մարդու իրավունքների պաշտպանությա ն առումով: |
| | Դաս | Ժամաքանակ |
| | Դաս 1-2. Սահմանադրություն և Ժողովրդավարություն<br>Դաս 3. Փոքրամասնության իրավունքներ և սեռային իրավահավասարություն<br>Դաս 4. Ընտրություններ<br>Դաս 5. Հանրային բարիք և անձի ինքնազտակցություն<br>Դաս 6. ՄԱԿ-ի և միջազգային կառույցների դերը ժողովրդավարության կայացման գործում: | 2<br>1<br>1<br>2 |
| Թեմա 2. Հանրային քաղաքականություն | Թեմայի նպատակը | վերջնարդյունքներ |
| | Բացատրել «հանրային քաղաքականություն հասակացությունը», ներկայացնել հանրային քաղաքականության մասնակիցներին, իշխանության դերը հանրային քաղաքականության ձևավորման մեջ: | Ներկայացնել հանրային քաղաքականության հիմնախնդիրների օրինակներ: |
| | Դաս | Ժամաքանակ |
| | Դաս 7. հանրային քաղաքականություն<br>Դաս 8-9. Հանրային քաղաքականության | 2<br>3 |

| | | |
|---|---|---|
| | գործընթացը և հիմնախնդիրները | |
| Թեմա 3. Քաղաքացիություն | Ներկայացնել «քաղաքացիություն» հասկացությունը, բացատրել քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում: | Նկարագրել մասնակցությունն ու առաջնորդությունը, որպես քաղաքացիական դիրքորոշման բնութագրիչներ: |
| | Դաս | Ժամաքանակ |
| | Դաս 10-11. «Քաղաքացիություն» հասկացությունը: Քաղաքացու իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում<br>Դաս 12. Ակտիվ քաղաքացի<br>Դաս 13. Մասնակցություն և առաջնորդություն | 2<br>1<br>2 |
| Թեմա 4. | Թեմայի նպատակը | Վերջնարդյունքներ |
| Քաղաքացիական հասարակություն | Բացատրել «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը, ներկայացնել քաղաքացիական հասարակության բաղադրիչները: | Նկարագրել հասարակական կազմակերպությունների, միությունների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքացիական հասարակության մեջ, օրինակներով ներկայացնել հասարակական կարծիքի և խոսքի, մտքի, խղճի ազատության կարևորությունը: |
| | Դաս | Ժամաքանակ |
| | Դաս 14-15. Քաղաքացիական հասարակություն: Հասարակական կազմակերպություններ<br>Դաս 16 Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները | 2<br>3 |
| Թեմա 5. | Թեմայի նպատակը | Վերջնարդյունքներ |

| | | |
|---|---|---|
| Թեմա 5. Քաղաքացիական հասարակության տնտեսական բաղադրիչը | Բացատրել շուկայական տնտեսության մեջ արտադրողների և սպառողների փոխկապվածությունը, սպառողների պահանջարկի վրա ազդող գործոնները, պետության դերը ազատ շուկայական տնտեսության մեջ; | Ներկայացնել տնտեսության պետական կառավարման անհրաժեշտությունը: |
| | Դաս | Ժամաքանակ |
| | Դաս 17-18. Շուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն<br>Դաս 19-20. Պետության դերը տնտեսության մեջ: Պետական բյուջե | 3<br><br>3 |

| Թեմա 6 | Թեմայի նպատակը | Վերջնարդյունքներ |
|---|---|---|
| Թեմա 6. Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները | Ունենալ գիտելիքներ իրավական և բարոյական նորմերի, բնական իրավունքների, մարդու քաղաքացիական և քաղաքական, մշակութային իրավունքների մասին: Ներկայացնել իրավունքների սահմանափակման հիմքերը: | Համեմատել բարոյական և իրավական նորմերը: Ներկայացնել օրինակներ մարդու քաղաքացիական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ: Մեկնաբանել մարդու տնտեսական, սոցիալական,մշակութային իրավունքների տեղը այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների շարքում: -Ուսումնասիրել երեխայի իրավունքների խախտման իրավիճակներ: |
| Թեմա 6. | Դաս | Ժամաքանակ |
| Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և | Դաս 21. «Մարդու իրավունքներ» հասկացությունը: Մարդու իրավունքների սերունդները:<br>Դաս 22-23. Մարդու | 1<br><br>2 |

| | | | |
|---|---|---|---|
| ազատությունները | քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները:<br>Դաս 24–25. Մարդու և քաղաքացու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները:<br>Դաս 26–27. Երեխայի իրավունքներ: Հաշմանդամների իրավունքներ: | 2<br><br>2 | |